

ՎԱԶԳԵՆ Շ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏ ԼԵԶՈՒՆ

«Թող բարձր և խրոխտ նեշե հայ լեզուն ամենուրեք»: («Էջմիածին» ամսաթեր)

Հայ գաղթաշխարհի ամենալուրջ ուշապ-
դրության արժանի հոդված մը լուս տեսավ
մեր Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիա-
ծին»ի մարտ-ապրիլ 1949-ի համարին մեջ,
«Մի ժանրակցիոն խնդրի շուրջ» խորագրով,
հայ լեզուն գաղութիւներու մեջ կենդանի պա-
հելու անհրաժեշտության վերաբերյալ, Ամեր-
իկայի Հայոց Առաջնորդարանի «Հայաս-
տանյաց եկեղեցի» հանդեսին մեջ, 1948
թիվ հոդվածի մը հրատարակության առթիվ:

Տրված ըլլալով ինդրույն կենսական կա-
րևորությունը Սփյուռքի հայության համար,
և որովհետև վերջերս նորեն մամուցի նյութ
դարձավ այս հարցը, Ամերիկայի Առաջնորդ
Գեր. Տիրան Եպիսկոպոսի հայտարարության
առթիվ, որ ի միջի այլոց իբր օրինակ բե-
րած է նաև ուսմանահայության պարագան,
պարտք կզգանք թուղթին հանձնելու քանի
մը ճշտումներ և դատումներ, հայ լեզուն
արտասահմանի մեջ կենդանի պահելու նվի-
րական գործին նկատմամբ:

Ուսմանահայ գաղութիւր ևս մտահոգված է
մայրենի լեզվի պահպանման խնդրով, մա-
սավանդ տր իր աշքին առց ունի Տիրան
Սրբազն Հոր ակնարկած հին ուսմանահայ-
ության— Անիի գաղթականության— տիսուր
պատմությունը, որ թեև մինչև 80—100 տա-
րի առաջ քանի մը տասնյակ հազարներու
հասնող ժողովուրդ մը կկազմեր, իր եկեղե-
ցիներով կարվածներով, մշակութային-քա-
րոյական հաստատություններով, սակայն
վերջին հարյուրամյակի ընթացքին այդ ժո-
ղովուրդը ուժացավ, հայեցավ և կորսվե-
ցավ: Այսօր կտոնենք միայն անոնց մնա-
ցորդները— քանի մը հարյուր հոգի, ցրված
երկոտասնյակ մը քաղաքներու մեջ—
որոնք նուակավին հայ ծալգում ունենալու
գիտակցություն ունին և ինքունքնին կկոչեն
պուստորդական ուսմաններ», որոշ կազ
պահելով մեր եկեղեցին հետ:

Ակներէ է սակայն թե, եթե Ռուսանիո
մեջ լիներ ներկայությունը նոր թրքահայ
գաղթականության, այդ հին հայության
մնացորդներն ալ կորսված կըլլային առանց
հետքի:

Մոլդավիո երբեմնի հայաշատ կեդրոն-
ներու մեր տասնյակ եկեղեցիները, ման-
քերը, եկեղեցիներու շենքերը—այսօր պիր-
թե դատարկի և անկենքան—միակ վկաներն
են հին հայության անցյալ փառքին: Մնա-
յալը խոր լուսություն է....

Պատմությունը մեզի կսովորեցնե, թե այս
իրողության պատճառներն գլխավորներն
հետպայներն են.

ա. Մայր երկրի, հայ Պայտինիքի հետ
կենդանի կապի պակասը.

բ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնին բաժնի վկլը
կամ անոր հետ սերտ հարաբերությանց
պակասը.

գ. Հայ լեզվի կրորատը:

Լեհաստանի և Տրանսիլվանիո հոծ թվով
հայությունը իր հոգին, իր լեզուն և դիմա-
գծով կորսնցուց իբրև ուղղակի հետե-
վանք Մայր Աթոռնեն, Հայաստանյաց
եկեղեցին բաժնի վկլը և պապական ան-
հարազար եկեղեցին գիրկը իրացում:

Հայ եկեղեցին և ժողովուրդը երր
ցին կապերը Մայր երկրն և Մայր Աթոռնեն,
այլևս անզոր դարձան պահելու հայ ժողո-
վուրդի ազգային ինքնուգույնությունը:

Պապական եկեղեցին իր սիհակ հասկցած
համարդիստոնեալվան միություն ստեղծելու
կոսմոպոլիտ գաղափարախոսությամբ, սպա-
նեց մեր ժողովրդի ազգային ոգին:

Մոլդավիո և Բուրգավինայի հայությունը
դիմադրեց 19-րդ դարու գավանափոխու-
թյան հասանքին և մնաց հավասարիմ Ս.
Էջմիածնին: Այս կերպով ան պահեց իր
ինքնությունը, իր լեզուն և մշակութը մին-
չև գրեթե 19-րդ դարու վիրոბրոր: Սակայն
ինչ ինչ պատճառներու բերմամբ, այդ շըր-
ջանին չկրցավ իր կապը պահպանել Մայր
Աթոռի հետ, չոմեցավ թեմակալ առաջ-
նորդները, — թեև բոլոր եկեղեցիները 2 են և
պայծառ վիճակի մեջ եղան միշտ, բազմա-
թիվ քահանաներով, չկրցավ պահել իր
վարժարանները, չկրցավ մանավանդ կեն-
դանի պահել մայրենի լեզուն և կորսնցուց
իր ազգային դիմագիծը:

Արդ, եթե կկամենանի որ մեր այսօրվան
գաղութները նույն վախճանը շոմենան,
ամեն զնով և բոլոր միջոցներով պետք է
պահպաննենք հայ լեզվի կենդանի գործա-
ծությունը Հայաստանյաց եկեղեցվու մեջ և
եկեղեցին դուրս մեր առօրյա կրանքին մեջ,
հայկական հայրենասիրության ոգինով առաջ-
նորդված:

Հեռու մեզմէ այն մոլորությունը, թե ա-
ռանց հայ լեզվի կրնանք հայությունը կեն-
դանի պահել միայն կրոնքով ու եկեղեցա-
կան պաշտամունքով:

Ժողովուրդի մը կյանքին մեջ, լեզուն լոկ

«իբր անդուսվար ծառալյող» գորովթյուն մը չէ: Լեզուն՝ կենդանի մարմին մըն է, — օրգանիզմ մը, — ժողովուրդի հուզեցնեն և մտածումներեն ծնած, զարգացած ու ծաղկած, ան մշտատն կենդանության և աճման մեջ գոնվող և ինքն ալ իր կարգին այդ ժողովուրդին յուրահատուկ զգայնությունը, մտածելու կերպը, հոգեկան նկարագիրը պահելու պաշտոնն ունեցող կենդանի ուժն է:

Ամեն անհատ կղզա ու կմտածե այն լեզվով, զոր կիսուի իր մայրենի լեզու: Ամեն անհատ իր ազգակիցներու հետ կրնա հասկցվից մանավանդ մայրենի լեզուով:

Հոգին, գիտակցությունը անկախ չեն խոսված լեզվեն: Այս վերջինը իր զորշմբ, իր գույնը, իր կաղապարները, իր շամշլ կպարտադրե մտածումին և զգացումին:

Լեզուն ժողովուրդի մը հոգեծին որդին է, որ հասունության հասնելով, իր ծնողը կպահե, կպահպանե և կառաջնորդի:

Հայաստանաց եկեղեցին անշուշտ ող ապությներուն մեջ վճռական դեր ունի հայապահպանման գործին մեջ, պայմանով սկարյ, որ հայ լեզուն կենդանի պահվի անոր մեջ և անոր կողքին: Վասնգի եթե լեզուն մոցցի, ինքը եկեղեցին ալ կուծանա, անարյուն իրականության կլիրածվի աղային տեսակետե: Առանց մայրենի լեզվի, հայ հավատացյալը անխոսափելի կերպով կկրիսնցնե իր հայրու հոգին, ազգային ուռուն դիմապիծը ու ինքնուրունությունը:

Լեզուն հավիտենական ծջմարտություն է, կենդանի ուժ և արժեք այն իմաստով որ պապակով ժողովուրդի հավիտենականությունը:

Սանոթ է բոլորին, թե ի՞նչ չեն, Յթանսական հապարտությամբ կըսեն. «Յթանսան՝ ալդ օրանսերեն լեզուն է»:

Լեզուն կենդանի իրականություն մըն է, որ կյանք կառնե ժողովուրդին և կյանք կուտա անոր. այո՛, ան կրնա մեռնիլ, բայց իր նետ կթաղե և արդ ժողովուրդը որպես աղային ամբողջություն, կթաղե նաև անոր շակուութը:

Եթե Ե. դարու մեր երջանկահիշատակ ախնիք հայ եկեղեցին չտային սեփական եղու, գիր ու գրականություն, մեր եկեղեցին վատահաբար շատոնց ի վեր կորսըն ուցած կըսար իր ազգային նկարագիրը, իր սկարմությունը և իր գոյությունն իսկ:

Աչա թե ի՞նչ կգրե այս մասին մեր վեափառ Հայրապետը, «Հայոց եկեղեցին» ողվածին մեջ. «Հայ եկեղեցին, որ իր առաջական ծառական ծառական ապագուի է, դարձ կատարելապես աղդային, երբ ներսու

Մեծի որդին՝ Սահակ կաթողիկոս և Մամոր Մաշտոց հայ տառերը հնարեցին, Ս. Գիրքը հայերենի թարգմանեցին և հետզհետե ստեղծվեցավ Ե. դարի հայ կլասիկ գրականությունը: Այդ օրվանից հայ վեգի և Հայ նեկեղեցու ուղիները միահյուսավեցին և նրանք համբար համբար ժամանակաց քայլեցին»:

Խորքին մեջ ժողովուրդ, հայրենիք, սեփական լեզու և մշակուլիթ մեկ անբաժանելի ամբողջություն կկազմեն, կարեսի չէ երկար ժամանակ մեկը պահել առանց մյուսին: Ամեն ժողովուրդ այն շափով է ժողովուրդ, ինչ շափով տր ան ոմի սեփական երկիր, սեփական լեզու, մշակուլիթ և ինքնապար հավաքական կյանք:

Երջանկություն է մեզ բորորիս համար հաստատել՝ թե այսօր, երկար ու մոռալ ալեկոծ պատմության մը հորձանքներեն վերշապես ադատագրված հայ ժողովուրդը, իր նորաստեղծ, հարազատ պետության՝ Սովետական Հայաստանի մեջ, վերապատճ է և ամուր կերպով հաստատած իր ազգային կյանքի ու զարգացման բոլոր հիմնական պայմանները:

Հայ ժողովուրդը փրկված է այլևս, կմնա Սփյուռքի մեջ ցրված մեր ժողովուրդի զավակներու պահպանման և փրկության հարցը:

Տարակուս պետք չէ ունենալ, թե Մայր Հայրենիքնեն դրւու, գարութային պայմաններու մեջ, ամենար է հայր հայ պահել տեփականորեն և լրիվ կերպով, սակայն մինչեւ մեր ժողովուրդի ամբողջական վերադարձ դեպի Մայր Հայրենիք, բոլորիս սեպու պարտականությունն է մեր եկեղեցիներու կողքին Հիմնել հայրենասիրական մշակութային հաստատություններ և մեր նախահայրերու հավատափին հետ միասին և նույն սրբության զգացումով պահել ու ապրեցնել մայրենի մեծասքան, լեզուն, զոր նաիրի Զարբան արդար հպարտությամբ կկոչե, «Հերոսական լեզուների հերոս երայր, հայոց լեզու:

Այսօր մանականդ, երբ հայ ժողովուրդը իր վերածնած, հասակ նետող և օրեօր աճող սեփական Հայրենիքը ունի, սովետական մեծ ու ազատ եղայրության աշխարհի մեջ, Սփյուռքի մեջ հայ լեզուն, հայ հոգին, հայ Հայրենասիրությունը կենդանի ու վառ պահելու նվիրական գործը Հայ եկեղեցիներ ու անոր բոլոր սպասավորներուն թե՛ պատմական սեպու պարտականությունն չ և թե՛ անոնց աղնիկ հպարտությունը:

(«Հայաստանյան ճակատ»):